№ 154 ՈՒՐԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 5

1905

ՈՒՐԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 5 № 154

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Աւետիս և Մարիամ Մանուէլեանցները յայտնում են ազգականներին և ծանօթներին, առաջինն իր քենու, երկրորդը իր քրոջ, Թիֆլիսի հայոց Կուսանաց վանքի դպրուհի՝

ՆԵԿՏԱՐԻՆԷ ՇԱՀՎԵՐԴԵԱՆՑԻ

ցաւալի մահը, որ տեղի ունեցաւ կարճատև հիւանդութիւնից յետոյ։ Ամբիծքը ուրբաթ երեկոյեան ժամը 6½-ին, սեփական տանը, Չուղուրէթ, Վօրօպօղեանի փողոցի ծայրին, № 19։ Ամբիծքից յետոյ կը տեղափոխվի Կուսանաց վանքը։ Պատարագը շաբաթ օրը, ժամը 10-ին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը, Կուսանաց գամբարանում.

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միութեան տարրեր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արդարադատութեան մեծ ակտը. Նամակ Քութայիսից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օսմանեան մամուլը և արաբական ապստամբութիւնը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Տասն օր աւերակներում։

ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐՐԵՐ

—

«Մշակի» մէջ բերված էին քաղուածօրէն ֆրանսերէն «Revue» ամսագրից մի քանի բնորոշ հատուածներ գերմանական արևելեան քաղաքականութեան և համիսլամութեան մասին։ Գերմանիան ունի քաղաքական շատ ծրագիրներ և զարմանալի չէ, եթէ նա իր ծրագիրներից մէկի մէջ մտցրած լինի և այն, որ պաշտպան հանդիսանալով Թիւրքիայի սուլթանին և մահմեդականներին առաջ տանի իր շահերը այն երկիրներում, ուր մահմեդականները կարող կը լինեն աջակից լինել Բերլինի արտաքին գործերի մինիստրութեան մէջ տնօրինվող քաղաքական մեքենայութիւններին։

Սակայն որքան էլ հնարագէտ լինի գերմանական դիւանագիտութիւնը, որքան էլ նա իրական աջողութիւններ ունենայ իր քաղաքական առաջընթացութեան մէջ, մենք կարող ենք միայն ցաւել, որ նա ոչ մի իրական օգուտ չը տալով մահմեդական աշխարհին, թիւրիմացութիւնների և սխալների մէջ է գըցում միլիօնաւոր մարդկանց։ Գերմանիան անկասկած, ինքը աջողութիւն կունենայ իր սեփական հաշիւներում, բայց որ մահմեդական ժողովուրդներն էլ օգուտ ունենան նրա ծրագիրներից—դա շատ կասկածելի է։

Վերցնենք մի այնպիսի գաղափար, ինչպէս որ համիսլամութեան գաղափարն է։ Դա գրաւիչ և առաջին անգամից ուժեղ մի գաղափար կարող է գուցէ թըւալ միամիտների համար, բայց իրօք դա մի խաբուսիկ երազ է, որ առաջ է մըղված քաղաքական նպատակով։

Որպէս զի համիսլամութիւնը աջողութիւն ունենայ, նա պէտք է կամ նոր առաքելութեան նպատակներ յանձն առնէ իր վրա, կամ կանգնած լինի մի այնպիսի ընդհանուր թշնամու դէմ, որի անմիջական նպատակը լինէր անխնայ և անվերջ կռիւ մղել իսլամի դէմ աշխարհի ամեն մի անկիւնում։

Մենք լաւ գիտենք, որ իսլամը մտադիր չէ նոր փոփոխութիւններ մտցնել իր ուսմունքների մէջ և նպատակ չունի նոր վարդապետութիւններ քարոզել աշխարհին։ Նա որոշված սահմանված մի կրօն է, որ վաղուց ձևակերպել է իր ասելիքները իր հաւատացեալներին։ Միւս կողմից մենք գիտենք, որ ոչ քրիստոնէական և ոչ մի ուրիշ աշխարհ նպատակ չէ դրել և բան ու գործ չէ շինել իր համար հալածել և ոչնչացնել մահմեդականութիւնը և ուրեմն առիթներ չէ տալիս մահմեդականութեանը միանալու և զինվելու ընդհանուր թշնամու դէմ։

Այդ պատճառով մենք չենք հաւատում համիսլամութեան գաղափարի ապագայ զարգացման։ Ճիշդ է նա կարող է երևան գալ այս ու այն տեղում, կարող է ոգևորել առանձին խմբերի, կարող է մեր օրերում շարժումներ և նոյն իսկ թիւրիմացութիւններ առաջ բերել կեանքի մէջ, սակայն այդ բոլորը սքօղված և վարագուրված բնաւորութիւն կը կրեն, որովհետև մահմեդականը բարոյական վստահութիւն չի զգայ ընդհանուր կռիւ մըղելու քրիստոնեաների դէմ, որովհետև այդ քրիստոնեաների մէջ կան շատ ազգեր, որոնք զանազան ժամանակներում բարեկամ են եղել և այժմ էլ բարեկամ են Թիւրքիային և ուրիշ մահմեդականներին։ Վերջապէս քրիստոնեաների շարքումն են և հէնց գերմանացիները, որոնք այսօր իրանց պաշտպան են հրատարակել մահմեդականութեան։

Համիսլամութեան գաղափարը դժբաղդ քաղաքական մի ծրագիր է, որ դատապարտված է բարոյական սնանկութեան, նոյնպէս, ինչպէս եթէ այսօր հրատարակվէր համաքրիստոնէական միութեան մի ծրագիր։ Աշխարհը այսօր ազգերի միութեան համար չէ դիմում հին կրօններին և բոլորովին ուրիշ աղբիւրներից է քաղում նոր հանրային կեանքի սկզբունքները։ Մահմեդականներին կարող է միացնել թէ միմեանց և թէ ուրիշների հետ այն, ինչ որ ներկայումս քաղաքակիրթ մարդկութիւնը մշակում է իբրև հասարակական կեանքի տարրեր, որոնցով բարոյապէս միացել են արդէն հարիւրաւոր միլիօններ Եւրոպայում և Ամերիկայում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԱԿՏԸ

—

Կատարվեց արդարադատութեան այն մեծ ակտը, որին այնքան անհամբեր սպասում էր ամբողջ հայ ազգը և Հայաստանեայց եկեղեցին իր ծերունի Հայրապետի հետ միասին։

Թագաւոր Կայսրը օգոստոսի 2-ին բարեհաճեց ստորագրել բարձրագոյն Ուկազ, որի մասին Կովկասի Փոխարքայ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվ յայտնեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին հետևեալ խօսքերով. «Շատ ուրախ եմ հաղորդելու ձեզ, որ Թագաւոր Կայսրը, ի նկատի առնելով Ձեր խնդիրքը եւ յարգելով իմ միջնորդութիւնը, բարեհաճեց նպաստաւոր մտքով վճռել հայոց եկեղեցական կալուածների վերադարձման եւ հայ դպրոցների վերաբացման հարցը։ Թագաւոր Կայսրը հաստատել է այդ մասին իմ արած զեկուցումը»։

Հասկանալի է, որ կայսերական արդարադատութեան և շնորհի այս նոր ակտը մեծ ցնծութիւն պէտք է պատճառէ ոչ միայն Ռուսաստանի հայերին, որոնց ուղղակի վերաբերում է, այլ և ի սփիւռս աշխարհի ցրված ամբողջ հայ ազգին, ցոյց տալով, որ կայսերական կառավարութիւնը վերադարձնում է հայերին նախկին վստահութիւնը և կամենում է նորից միջոցներ հայթայթել նրանց՝ զարգանալ խաղաղ կուլտուրական, բարոյական և մտաւոր շաւղով և լինելով բարի, կրթված ազգասէր հայեր, լինել մի և նոյն ժամանակ ընդհանուր հայրենիքի՝ Ռուսաստանի օգտակար, հաւատարիմ քաղաքացիներ, նպաստելով այդ հայրենիքի առաջադիմութեան և բարգաւաճման։

Եւ թէև հայոց բարձր հոգևոր իշխանութիւնը՝ սպասում է Կայսերական հրովարտակի ստացման և պաշտօնական յանձման, որպէսզի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱՍՆ ՕՐ ԱՒԵՐԱԿՆԵՐՈՒՄ

VI

Տեղ հասնելուս պէս ես տեսայ պրօֆէսօր Մառին սաստիկ մտատանջութեան մէջ։ Առաջին նորութիւնը, որ նա հաղորդեց, այն էր թէ այլ ևս միջոցներ չը կան պեղումները շարունակելու։

Միջոցներ չը կան... Իսկ ահագին գործը դեռ հազիւ էր կէսին հասցրված։ Մօտ երկու ամսվայ դառն աշխատանք, որ ինքնամոռացութեան էր հասնում,—և պէտք էր կիսատ թողնել ամեն ինչ, հեռանալ։ Հեռանալ, չը կարողանալով նոյն իսկ մի որոշ եզրակացութիւն կազմել Գագիկի շինութեան մասին։ Կիսատ գործը չէր կարելի և առարկայ դարձնել այն զեկուցման համար, որ պ. Մառ պիտի ներկայացնէր հնագիտական կօմիսիային և որից կախված պիտի լինէր ապագայ պեղումների հարցը։

Դրութիւնը ծանր էր մանաւանդ այն պատճառով, որ պ. Մառ դիմումներ էր արել իրան օգնելու համար, բայց ոչ մի տեղից պատասխան չէր ստանում։ Անորոշութիւնը ուղղակի տառապեցնում էր յարգելի գիտնականին։

Պէտք է իմանալ, որ Անիի մէջ պ. Մառ գործեր կատարում է, բացառապէս հասարակական աջակցութեան վրա յոյս դրած։ Հնագիտական կօմիսիան, որի ներկայացուցիչն է նա, շատ չնչին միջոցներ է բաց թողնում։ Այս տարվայ պեղումների համար պ. Մառ կօմիսիայից ստացել է միայն երեք հարիւր րուբլի։ Եթէ անցեալ տարի պ. Մառ մասնաւոր աղբիւրներից չը ստանար մօտ հազար րուբլի, նա չէր էլ կարող շինել Անիի Թանգարանը և միաժամանակ պեղումներ կատարել։ Այս տարի էլ պ. պրօֆէսօրը նոյն մասնաւոր օժանդակութեամբ է եկել Անի։ Մի հարուստ հիմնարկութիւն, որի անունը առ այժմ չեմ տալիս, խոստացած է եղել դնել նրա տրամադրութեան տակ մի խոշոր գումար, բայց վերջ ի վերջոյ կարողացել է տալ միայն երկու հազար րուբլի։

Սկզբում այս գումարը բաւական էր համարվում Գագիկի եկեղեցու ահագին թումբը քանդելու համար։ Բայց գործը ցոյց տուեց, որ անհամեմատ դժուար ու մեծածախս է եղել։ Օրեկան 40—45 բանուոր աշխատեցնելով, պ. Մառ եօթը շաբաթվայ ընթացքում չէր կարողացել հասնել եկեղեցու մէջ բլրացած լիցքերն անգամ։

Եւ ահա մի մարդ, որ չէ խնայում իր ժամանակը, իր ույժերը, մի մարդ, որ լոկ գիտութեան ներշնչած սէրից աշխատում է օրեկան 10 ժամ արևի տակ, իր ստացած նպաստները ամբողջապէս նուիրում է Անիին, իր համար շատ բաւական համարելով գիտութեան գործին ծառայած լինելը,—մի այդպիսի մարդ պիտի ձեռքերը ծալէր, պիտի դառնութեամբ զգար, որ շարունակել այլ ևս չէ կարող։ Այդ անկարողութիւնը, ի հարկէ, ոչինչ անպատուաբեր հանգամանք չունէր անձամբ պ. Մառի համար։ Բայց ինչ էր նա այն ազգի համար, որին Անին ժառանգութիւն է մնացել անցեալից, որ ազգասիրական հիմն է դարձրել «Անի քաղաք նստեր կուլայ» երգը... Մեծ անպատւութիւն միայն, անողորմ դատապարտութիւն...

Դեռ Թիֆլիսում ես գիտէի, որ պ. Մառ կարօտ է օգնութեան։ Ամաչում էի իբրև հայ, ամաչում էի իբրև մարդ, որի համար կուլտուրական աշխատանքը կեանքի սրբութիւն սրբոցն է։ Փորձեցի մի քանի դիմումներ անել։ Յուսահատվեցայ։ Մի քանիսների մօտ կարծես հոտենտոտների աշխարհի մասին էի խօսում, մի քանիսները գոնէ այնքան սիրելի եղան, որ խօսքով ձրի համակրութիւն յայտնեցին։ Կեանքումս դիմումներ շատ չեմ արել և լաւ, որ այդպէս է։ Սարսափելի է հայկական անտարբերութիւնից անշարժացած դէմքեր տեսնել այնպիսի դէպքերում, երբ ամբողջ սրտով զգում ես, որ մի լաւ, հասարակաշահ գործ կատարել է։—Վերջապէս մեր լրագրի խմբագիր պ. Քալանթարը յանձն առաւ կարգաւորել օգնութեան գործը և ես կարողացայ ուրախացնել պ. Մառին Անիում, ասելով թէ նրան օգնութիւն կը տրվի գործը վերջացնելու։

Այդ օգնութիւնը դրվեց և այժմ ես գոհունակութեամբ արձանագրում եմ, որ այս ամառ պեղումները անընդհատ կը շարունակվեն։ Բայց չոգևորվենք սրանով։ Ծանր ու կարևոր հարց կայ,—իսկ ապագայում...

Մեր ժողովուրդը, երբ կամենում է արտայայտել մի կատարած գործի ամբողջ դժուարութիւնը, ասում է. «Դա քարով փայտ կտրել է»։ Մինչև այժմ Անիի համար ինչ արվել է, կատարելապէս քարով փայտ կտրել է եղել։ Պիտի միշտ այդպէ՞ս գործենք։ Դա կը լինի դժբախտութիւն, տանջանք, անկարողութիւն, մի խօսքով ամեն ինչ, բայց ոչ գործ։

Հսկայական գործ կայ մեր առջևում։ Անիին մենք սովորեցրել էինք լացող մի աւերակ լինել, բուերով բնակեցրած մի անբախտ տեղ։ Բայց եկաւ օտար գիտնականը, հասկացրեց նրան թէ ինչ է ինքը։ Եւ այժմ Անին կը ծաղրէ ձեզ, թէ դուք ձեր էժանագին ողբերով մօտենաք նրան։ Նա պահանջում է ձեզանից ոչ թէ ջրալի թանաքով արձանագրվող բանաստեղծական զեղումներ, այլ գործ։ Պըրպտեցէք նրա խորհրդաւոր ծալքերը, թող ազգասիրական գրչի տեղ գործէ երկաթէ բահն ու բրիչը։ Բաց արէք նրա սրբազան, խորհըրդաւոր ծոցը, որոնեցէք գտնէք ձեր կեանքը, ձեր անցեալն ու ներկան լուսաբանելու և լուսաւորելու համար։ Բաց արէք Անիի փողոցները, հրապարակները, տները, հասարակական հիմնարկութիւնները։ Ո՞վ գիտէ ինչեր կան այժմեան կոյտերի տակ, ո՞վ գիտէ ինչե՞ր դուրս կը գան, երբ դուք կը քամէք կը մաղէք աւերակների փոշին...

Այո, ճիշտ և ճիշտ հսկայական գործ կայ մեր առաջ։ Իսկ մենք քարով փայտ կտրել միայն գիտենք...

Երեկոները, ընթրիքից յետոյ, պ. Մառ երկար ու վերին աստիճանի հետաքրքրական զրոյցի էր բռնվում մեզ հետ։ Իբրև կովկասցի, նա ջերմապէս սիրում է Կովկասը, բարձր է գնահատում կովկասեան կուլտուրական և առաջադիմական շահերը և հէնց այդ պատճառով սաստիկ ցաւում է, որ գիտութիւնը չէ արմատանում մեր մէջ։ Խօսքը, ի հարկէ, այն գիտութեան մասին է, որ անմիջապէս վերաբերվում է մեր երկրին, նրա ազգաբնակութեան, նրա անցեալ ու ներկայ կեանքի բազմակողմանի ուսումնասիրութիւնն է պարունակում իր մէջ։

Մենք դեռ չունենք գիտութիւն, բայց պիտի ստեղծենք նրան, այլապէս մենք միշտ խեղճ կը մնանք։ Ի՞նչպէս ստեղծել։ Պէտք է ուսումնասիրութիւններ կատարել ամենալուրջ կերպով, հաւաքել փաստեր, փաստեր և միայն փաստեր։ Այդ փաստերը պիտի գան մեզ համար անցեալի իսկական պատմութիւնը գրելու։ Այժմ մենք չունենք պատմութիւն, որովհետև մինչև այժմ բաւականացել ենք անցեալից մնացած գրաւոր յիշատակարաններով։ Բայց աղքատ, միակողմանի, տենդենցիօզ են այդ յիշատակարանները։ Նրանք գլխաւոր աղբիւր չեն կարող դառնալ, նրանք միայն օժանդակ, լրացուցիչ դեր կարող են կատարել։ Գլխաւոր աղբիւրը պիտի դառնան այն փասկարգադրէ բոլոր հայ եկեղեցիներում գոհաբանական մաղթանքներ կատարել և հրաւիրել հայ ժողովուրդը աղօթել Կայսրի երկարակեցութեան և առողջութեան համար, բայց, գաւառներում, հայ ժողովուրդը, սրտին լցված ցնծութեամբ՝ տօնում է կայսերական արդարադատութեան ակտը և մաղթանքներ է կատարում եկեղեցիներում։

Եւ ժողովրդի այդ ցնծութիւնը մենք շատ հասկանալի և բնական ենք համարում։ Վերջին տասն տարիների ընթացքում կովկասեան նախկին իշխանութեան հայերի դէմ ձեռք առած մի շարք ճնշող միջոցները առաջ էին բերել հայ ժողովրդի մէջ բարոյական վհատութիւն և լքում և այն համոզումն էին գոյացրել, թէ հայ ժողովուրդը Ռուսաստանում օրէնքից դուրս է դրված, թէ նա չէ վայելում այլ ևս կառավարութեան տածած նախկին վստահութիւնը։ Բարոյական այդ լքումը և վստահութիւնը սաստկացաւ 1896 թւին, երբ հայոց եկեղեցական-ծխական դպրոցները փակվեցին վերջնականապէս, իսկ իր գագաթնակէտին հասաւ, երբ, Կովկասի նախկին կառավարչապետ իշխան Գոլիցինի հաղորդած անճիշդ տեղեկութիւնների հիման վրա, հրատարակվեց 1903 թ. յունիսի 12-ի օրէնքը, որով հայ եկեղեցիները զրկվեցին իրանց ինքնավարական և իրանց գոյքերը կառավարելու ու տրամադրելու իրաւունքից։

Ծանր էր հարուածը, ուստի և նա խորապէս ցնցեց ամբողջ հայ ազգը և եկեղեցին։

Սակայն բարոյապէս լքված, վհատված հայ ժողովուրդը, որի կրած բարոյական վշտերին եկան աւելանալու և Բագուի ու Նախիջևանի ողբալի դէպքերը, ու Թիւրքիայի իր եղբայրակիցների բազմաչարչար կեանքի դառնութիւնները, իր անհուն վշտի մէջ չէր յուսահատվում վերջնականապէս, չէր կորցնում իր հաւատը, յոյսը, որ մի օր արդարադատութիւնը կը յաղթանակէ, որ ռուսաց Կայսերական կառավարութիւնը կը վերադարձնէ նրան իր նախկին վստահութիւնը, հայրական վերաբերմունքը և խնամքը։

Եւ նա չը սխալվեց իր յոյսերի մէջ։ Եկաւ Նորին Կայսերական Մեծութեան Փոխարքան, Կոմս Վօրօնցով-Դաշկով, որը, հաւատարիմ իր խոստման, որ տուել էր դեռ Պետերբուրգում հայոց Հայրապետի պատուիրակութեան, լուրջ կերպով քննեց հայերի գանգատները, ուշադիր եղաւ նրանց պահանջներին և որոշեց գոհացումն տալ նրանց ու միջնորդելով Թագաւոր Կայսրի առաջ՝ նուիրագործել արդարադատութեան մեծ ակտը, կամեցաւ ակնյայտնի կերպով, շօշափելի փաստերով ցոյց տալ հայ ժողովրդին, որ նա խտրութիւն չէ դնում նրա և լայնածաւալ Ռուսաստանի միւս հպատակների մէջ, որ նա, հայ ժողովուրդը, պէտք է վայելէ այսուհետև կայսերական արդարադատութեան և խնամքի բարիքները, ինչպէս վայելում էր նախկին Փոխարքաներ՝ Վօրօնցովի, Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի օրով։

Մենք դեռ չը գիտենք Կայսերական հրովարտակի մանրամասն բովանդակութիւնը, բայց գիտենք, Փոխարքայի ստացած խօսքերից, որ 1) հայոց եկեղեցական կալուածները, որոնք գրաւվեցին 1903 թ. յունիսի 12-ի օրէնքի հիման վրա, վերադարձնվում են, 2) հայոց եկեղեցական-ծխական դպրոցները, որոնք փակվեցին 1884 և 1896 թւին, վերաբացվում են, հետևաբար հայ ժողովրդին նորից իրաւունք և հնարաւորութիւն է տրվում ունենալ եկեղեցական-ծխական հանրակրթական դպրոցներ։

Դատի արդար լուծման և Կայսերական նոր շնորհի ստացման համար հայ ժողովուրդը մեծապէս պարտաւոր է Փոխարքայ կոմս Վօրօնցով-Դաշկովին, որի բարեացակամ և անաչառ վերաբերմունքը դէպի հայ ազգը, անկասկած, մեծ գրաւական է, որ այսուհետև ևս ամեն մի արդար պահանջ և խնդիրք ուշադիր հայեցողութեան կարժանանայ նրա կողմից։

Ոչ պակաս երախտագիտութեան արժանի է և Փոխարքայի օգնական Սուլթան Կրիմ-Գիրէյ, որը մեծապէս նպաստեց գործի աջողութեան։

Հայերը իրանց աւանդական յարգանքը, որ ունեն Կովկասի նախկին Փոխարքայ Վօրօնցովի յիշատակի համար, այսօր փոխադրում են նրա արժանաւոր ժառանգի՝ կոմս Վօրօնցով-Դաշկովի վրա։

Եւ հայերին մնում է արդիւնաւոր կերպով օգուտ քաղել կայսերական նոր շնորհից, բանալով եկեղեցական-ծխական դպրոցներ, որոնց համար մշակվում է այժմ, Վեհ. Հայրապետի կարգադրութեամբ, նոր կանոնադրութիւն և ծրագիր։

Հ. Առաքելեան

ՆԱՄԱԿ ՔՈՒԹԱՅԻՍԻՑ

—

Յուլիսի 25-ին

Այսօր գործադուլ արին բոլոր կառապանները։ Քիչ յետոյ սրանց միացան նաև ջրկիրներն ու սայլապանները։ Նրանք պահանջում են կամուրջով անցնելու հարկի վերացումը և ձիերից վերցվող հարկի պակսեցումը։ Այստեղ Րիօն գետի վրա երեք կամուրջ կայ և ամեն կամուրջով անց ու դարձ անող կառքից վերցնում են 5 կոպէկ։ Կառքի վերջաւորութեան գինը Քութայիսում 20 կոպէկ է և որովհետև գետը անցնում է քաղաքի մէջտեղով, ուստի կառապանը ստիպված է անցնել կամուրջը և վերադառնալ իր նախկին տեղը—բերման և դրա համար նա վճարում է 10 կոպէկ, ինքն էլ վաստակելով միայն 10 կոպէկ։ Իսկ առանձին հարկ ամեն մի ձիի համար վճարում են տարեկան 8 րուբլի, ուրեմն չորս ձիի համար, որ ամեն մի կառքին անհրաժեշտ է՝ 32 րուբլի։ Այդ հարկն էլ նրանք պահանջում են իջեցնել ու թից երեք րուբլու ամեն մի ձիի համար։ Պէտք է խոստովանել, որ այստեղի կառապանների դրութիւնը շատ աննախանձելի է։ Նախ նրանք Թիֆլիսի կառապանների պէս չեն կեղեքում մարդկանց, տեղ հասցնելով քեզ՝ 20 կոպէկը վերցնում են ասելով՝ «շատ շնորհակալ եմ, իմ պարոն» և եթէ երբեմն աւելորդ էք տալիս, նա անմիջապէս աւելորդը վերադարձնում է քեզ, եթէ չը պնդէք, որ աւելորդը ընծայում էք իրան։ Բայց շատերը եթէ կամուրջը չեն անցնում 20 կոպէկի փոխարէն տալիս են 10—15 կոպէկ։ Քաղաքացիների համար կառապանների գործադուլը այնքան զգալի չէ, բայց մեծ նեղութիւնների ենթարկվեցին երկաթուղով եկողները, մանաւանդ կապոցներ ունեցողները։

Կառապանների պահանջները կատարելը քաղաքի կողմից անհնարին է կամուրջի վերաբերեալ, քանի որ քաղաքի մուտքի գլխաւոր աղբիւրներից մէկն է կազմում այդ տուրքը։ Մեր կարծիքով աւելի լաւ է, որ քաղաքը կարգադրէ, որպէս զի կամուրջով անցնելիս հինգ կոպէկը կառքում նստողը տայ, ինչպէս այդ անում են Թիֆլիսում, իսկ տարեկան տուրքը թեթևացնելու համար՝ երթևեկութեան սակագինը 20 կոպէկի փոխարէն—25 կոպէկ նշանակէ։

Այստեղ երէկ գիշեր մեծ հեղեղ էր սարսափելի որոտմունքներով։ Քաղաքի մօտ գտնվող Քուխաիրի գիւղում կայծակը սպանեց մի եզան։

Վերջերս այստեղ տները բաւական թանգացել են, հիւրանոցները լիքն են՝ անհանգիստ տեղերից այստեղ ապաստան գտած բազմութեան պատճառով։ Կիրակի օրերը վօկզալում մեծ կենդանութիւն է տիրում։ Վաղ առաւօտից մարդիկ լցվում են վագոնները և զինւորական երաժշտութեան ուղեկցութեամբ գնում մօտիկ զբօսավայրերը, որոնցով շատ հարուստ է Քութայիսը։ Մարդիկ շարունակ իջնում են գնացքից. շատերը վազում են դէպի Գելաթի հռչակաւոր վանքը, շատերը նախապատիւ են համարում դեռ տեսնել Մօծամէթի հրաշալի վանքը, շատերը ցրվում են միւս զբօսավայրերը, ուր կան սառնորակ աղբիւրներ, հանքային, խմելու համար պաղ և լողանալու համար տաք ջրեր։

Բայց սա Քութայիսի շուրջը գտնվող սքանչելի տեղերից մի ամենափոքրիկ մասն է։ Կան տեղեր, որոնց մի քանի սեզոնում մարդ չէ կարող այցելելով վերջացնել։

Ս. Նազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Վեհափառ Կաթողիկոսի ուղարկած հեռագիրները թեմերը եկեղեցական կալուածների վերադարձի և հայոց դպրոցների վերաբացման մասին, մեծ տպաւորութիւն են գործել գաւառներում։ Ժողովուրդը, որ գիտէ չափազանց շատ ոգևորվել, այս անգամ էլ, առանց սպասելու Բարձրագոյն ուկազի հրատարակմանը, առանց գործի մանրամասնութիւնների հետ ծանօթանալու, ուրախութեան առատ զգացմունքից դրդված, ահագին ցոյցեր է կատարում։ Այսպէս՝ Ալէքսանդրօպօլում լուրն ստացվել է գիշերը. հետևեալ օրը բոլոր խանութները փակ են եղել և ժողովուրդը հանդիսաւոր տրամադրութեամբ, խնջոյքների մէջ է եղել։—Սղնախից և մի քանի այլ տեղերից Նորին Վեհափառութեան անունով շնորհաւորական հեռագիրներ են ստացվել։ Շուշում գոհաբանական մաղթանք է կատարվել Թագաւոր Կայսրի երկարակեցութեան համար։ Երևանում ժողովրդի ուրախութիւնը հասել է հսկայական չափերի։ Ժողովրդական ուրախութիւնից անմասն չեն մնացել նաև Թիֆլիսի ամարանոցներում խմբված ամարանոցաւորները։ Կօջորից Ս. Վ. Արղութեանի մեր խմբագրութեանն ուղարկած հեռագիրն ապացոյց է ամարանոցներում տիրող այդ ուրախութեանը։

—

Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցով-Դաշկովը օգոստոսի 3-ի երեկոյեան դէմ Թիֆլիսից մեկնեց Կիսլովօդսկ իր ամուսնու, կոմսուհի Ելիսավետա Անդրէեվնայի հետ միասին։ Նրան ուղեկցում է Կովկասի ոստիկանական մասի գլխաւոր գեներալ մայոր Ե. Ն. Շիրինկինը։

—

Կովկասեան զօրքերի գլխաւոր հրամանատարը պատուիրել է ուղարկել Թիօնէթի և Դուշէթի գաւառները, տեղական քաղաքացիական վարչութեանը օգնելու համար երկու հարիւրեակ հետևակ և 2 հարիւրեակ կազակ զօրքեր։ Աչքի առաջ ունենալով Նովօրօսսիյսկ քաղաքում տիրող անհանգիստ դրութիւնը, Փոխարքայի հրամանով, այնտեղ է ուղարկվում մի բատալիօն հետևակ զօրք, օգնելու քաղաքացիական մասի վարչութեանը։

—

Կովկասի Փոխարքայի մօտ առանձին յանձնարարութիւնների գեներալ Ստախօվիչը ուղարկվում է Թիօնէթի գաւառը միջոցներ ձեռք առնելու խաղաղ լեռնական փշաւներին, խևսուրներին և թուշերին ապահովելու չէչէնների յաճախակի յարձակումներից

—

Կովկասի Փոխարքան, մերժել է Ջէլալ Մահ-

տերը, որ մենք կը կարողանանք հաւաքել, խիստ ընտրողութեամբ վերաքննել, ստուգել տեղն ու տեղը, քննութեան բովից անցկացնել։ Միայն այն ժամանակ մենք կունենանք մեր ձեռքում հին կեանքի իսկական վաւերագրերը։

Այդ վաւերագրերը թաղված են հողի մէջ, աւերակների տակ, ծածկված են արձանագրութիւնների մէջ, որոնք դեռ մնում են չուսումնասիրված։ Պէտք է խուզարկել այդ բոլորը, պէտք է որոնել անդուլ ու անդադար։ Բրիչի մի հարուածը շատ անգամ աւելի մի մեծ աշխարհ է բացանում, քան մի հաստափոր գիրքը։ Եւ մինչև երբ յետաձգել, մինչև երբ սպասել։ Ե՞րբ պէտք է, վերջապէս, սկիզբ դնել, գնալ հաստատ ուղղութեամբ։

Մենք ծոյլ ենք, բայց ժամանակը մեզ չէ սպասում։ Նա կատարում է իր գործը։ Անին—մի՞թէ նա տարէցտարի չէ հալվում ու մաշվում։ Ահա Մայր Եկեղեցին իր պատռված կողով, որ մի օր կարող է գետին տապալել այդ ամբողջ հսկայ ու չքնաղ շինութիւնը։ Նրա վերաշինութեան համար բաւական կը լինի մի 20—25 հազար րուբլի։ Պրօֆեսօրը ասում էր, որ իրան խոստացել են այդպիսի մի գումար տալ. բայց խոստումները... Վերջ ու սահման, իսկ գլխաւորը՝ իրագործում չունին։ Ահա Ս. Փրկիչը. նրա հարաւ-արևմտեան անկիւնը քանդված է և պատի մի բարակ կտոր այսօր միակ պատուանդանն է, որի վրա պահվում է եկեղեցու ամբողջ կէսը։ Մի օր այդ պատուանդանն էլ կարող է քանդվել։ Գոնէ մի չոր պատով կարելի լինէր այդ կողմից յենաբան շինել, վտանգի առաջն առնելու համար։ Ահա Առաքելոց հոյակապ եկեղեցու վերջին ուժասպառ պատառիկները կարող են մի աղէտալի հարուածից տապալվել։ Պէտք է պահպանել և նրան։

Մի կողմից պրպտել, աւերակները խուզարկել, միւս կողմից կանգուն շինութիւնները պահպանել և վերանորոգել—ահա ինչ է հարկաւոր մեզ։ Պ. Մառի համար երազ չէ, այլ հեշտ իրագործելի մի բան դարձնել Անին մի ուսումնավայր, ուր կը կենտրոնանային հնագիտական ուսումնասիրութիւնները։ Իր մտքում նա դրած ունի հնագիտական մի դպրոց Անիում՝ մասնագէտներ պատրաստելու համար։

Ույժեր չը կան—ահա գլխաւոր դժբախտութիւնը։ Հօ ինքը, Մառը, կամ մի ուրիշ մասնագէտ չէ կարող իր վրա վերցնել ուսումնասիրութիւնների ամբողջ գործը։ Հարկաւոր է ստեղծել ուղղութիւն, դպրոց, որ շարունակէր գործը աւելի մեծ արդիւնքով, հաւաքական ույժերով։

Ես հիացած լսում էի տաղանդաւոր գիտնականին և իմ մէջ սև օձի պէս գլուխ էր բարձրացնում կասկածը՝ արդեօք մեր երկրում եմ լսում այս խօսքերը, արդեօք ծանօթ է իմ խօսակիցը մեր իրականութեան։ Ինձ խայթում էր այդ օձը, սառնալով հայկական անտարբերութիւնից անշարժացած դէմքերի կերպարանքը, որ սարսափեցրել էր ինձ Թիֆլիսում։

Բայց և այնպէս, հաճելի և սիրելի էր լսել գիտնական մարդու այդ ճառերը, այդ լաւ, պաշտելի մտքերը։ Երբեք չեմ մոռանայ այդ ամառնային զով ժամերը յաւիտենական մեռելութեան մատնված քաղաքում, ուր գիշերային մթութեան մէջ ցնցված ուրուականները, այդ եկեղեցիների, պարիսպների, անանուն բեկորների ստուերային գծագրութիւնները տանում էին ինձ երազների, խորհրդաւորութեան աշխարհը։ Ո՞վ գիտէ, գուցէ այն, ինչ լսում եմ այժմ իմ ականջներով, վաղը կը դառնայ իրականութիւն, գուցէ ես լսում եմ ապագայի ձայնը։ Գուցէ միշտ այսպէս խեղճ ու անկարող չենք լինի մենք։ Գուցէ աշխարհ գալու հերթին սպասում է մի սերունդ, որ պողպատ կունենայ իր մկանունքների մէջ, կը հերոսանայ իր կուլտուրական աշխատանքներով։

Գուցէ...

Բայց այժմ։ Սպասենք երկնքի այցելութեան։ Սպասենք, որ հերոսների սերունդ շընորհվի մեզ։

Բնազանցական թափառումներով չը մթացնենք մեր միտքը։ Լինենք հողի վրա կանգնած, իրական մարդ, հասկանանք, որ բնութիւնը, մարդկութիւնը հաստատուն, որոշ օրէնքներով է ղեկավարվում։ Հասկանանք, որ ամեն ապագայ ներկայի շարունակութիւնն է և ապագան կեանքից չէ ընկնում իբրև ողորմութիւն կամ պատիժ, այլ պատրաստվում է։ Պատրաստողները մենք պիտի լինենք, մենք, և ուրիշ ոչ ոք։ Փուշ ցանել և վարդի հունձ սպասել անմտութիւն է։

Պահանջը անողորմ կերպով կանգնած է մեր առջև, մեր օձիքն է բռնել։ Մենք պէտք է ըսկսենք, որպէս զի իրաւունք ունենանք մեր սերունդներից պահանջել շարունակութիւն։ Եթէ քարով փայտ կտրեցինք, այս ամառ մի կերպ ազատեցինք Անիում աշխատող գիտնականին ծանր դրութիւնից, դա դեռ սկսել չէ նշանակում։ Սկսել պէտք է գիտակցօրէն, ըսկսել պէտք է լայն չափերով, որոշ ու հաստատ ձգտումներով և ոչ թէ վայրի վերոյ, ստիպված մի բան անելու, մի կերպ օձիք ազատելու ցանկութիւնից։

Զգում էք կարևորութիւնը։ Դարերի մի մեծ կեանք իր հարցերով, իր շահերով թաղված է գետնի մէջ։ Մինչև նրան դուրս չը հանենք, մինչև նրան չը դնենք օրվայ լոյսի տակ, չը պիտի կարողանանք պարզ կերպով բացատրել մեզ, թէ որտեղից ենք գալիս և ուր ենք գնում։

Զգո՞ւմ էք։ Ամենագլխաւորը, էականը այս է։ Եթէ զգում էք, պէտք է սկսէք։ Ի՞նչ է պահանջվում։ Հաւաքել, կազմակերպել մի հաստատուն արկղ, մի ֆօնդ Անին ուսումնասիրելու, Անին պահպանելու, Անիի կեանքի գեղեցկութիւններ հաղորդելու համար։

«Չէ՞ քո Անին ափսոս է», ասում էր հին ժողովրդականացած երգը։ «Կրկնեցէ՛ք այդ խօսքերը, կրկնեցէք ո՛չ թէ իբրև անարդիւնք ազգասիրութեան մի աղաղակ, այլ իբրև իրական, շատ էական շահերի մի անյետաձգելի պահանջ։

Այսօր կայ մի պրօֆէսօր Մառ։ Ո՛չ տաղանդ է պակասում նրան, ո՛չ հմտութիւն, ո՛չ վառ սէր դէպի մեր անցեալն ու ներկան, ո՛չ ահագին եռանդ։ Օգտվենք այդ ամեն կազմով պատրաստ, ամեն կողմով օգտակար ույժից։ Նրա միջոցով կարող ենք ամեն ինչ անել մեր Անիի համար. խելացի բանը էք ուզում, աջակցութիւն, հովանաւորութիւն էք ուզում,—ամեն ինչ կայ։

Չը կայ միայն մի բան—նիւթական միջոց։ Ահա այդ պէտք է ստեղծել, այդ պէտք է դնել պ. Մառի տրամադրութեան տակ։

Գագիկի եկեղեցու պեղումները այս ամառ կը վերջանան։ Յետոյ։ Գիտնականի բահին ու բրիչին են սպասում դեռ շատ շինութիւններ։ Եկեղեցիների պեղումները կարելի է բաւական համարել։ Հին եկեղեցիներով աղքատ չենք։ Բայց հին տներ, հին ապարանքներ—ահա ինչ են մեզ հարկաւոր։ Դրանցով լիքն է Անին։ Միջնաբերդի գագաթին մի մեծ շինութեան մնացորդներն են փռված։ Ի՞նչ գիտենք, թէ դա թագաւորական պալատը չէ։

Եւ սակայն, նրան բաց անելու համար, ինչպէս ասում էր պ. Մառ, հարկաւոր են աւելի մեծ միջոցներ, ամիսների պատրաստութիւններ։ Տուէք, ուրեմն, միջոցներ...

Լէօ

մէջ Ղուլի-Զադէի խնդիրը, որ վերաբերում էր Թիֆլիսում Ադրբէջանի Թուրքերէն լեզուով մի նոր լրագիր հրատարակելու հարցին, որի անունը լինելու էր «Նովրուզ»։

—

Կովկասի Փոխարքան թոյլատրել է «Նոր-Դար» լրագրի խմբագրին իր լրագրում զետեղելու պատկերներ, նկարներ, տեսարաններ և այլն, և հրատարակել յաւելուածներ տարեկան 32—52 համար։

—

Քութայիսի նահանգի լեռնային Րաչինսկի գաւառի սահմանի մօտ յուլիսի 30 ին սվանէթները յարձակվել են սահմանապահ ստրաժնիկների վրա և սպանել նրանցից երկուսին։ Մարդասպանների ետևից ուղարկված են զինւորներ։

—

Կովկասի գլխաւոր վարչութիւնը մերժել է Ռաշիդ բէկ Իզմայլովի խնդիրը հրատարակել Թիֆլիսում Ատրպատականի Թուրքերէն լեզուով մի նոր լրագիր, որի անունը պէտք է լինէր «Թազա-Զաման» («Նոր-Ժամանակ»)։

—

Յուլիսի 30-ին Վլադիկավկազի շրջանի սահմաններում 20-ի չափ ինգուշներ յարձակում գործեցին միլիցիոնէրների վրա և սպանեցին մի ձի, երկուսն էլ վիրաւորեցին։ Հրաձգութեան ժամանակ ինգուշներից մէկը ծանր վիրաւորվում է, բայց ընկերները փախցնում են նրան և հետները տանում։

—

«Турк. Вѣд.» լրագիրը լսել է, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան դպրոցները, որոնք գտնվում են Թուրքեստանի և Կովկասի սահմաններում, պէտք է ենթարկվեն վերաքննութեան։ Վերաքննութիւնը կատարելու է մինիստրի խորհրդի անդամ Բուդիլօվիչը։

—

Ստացանք հետևեալ նոր գրքերը. 1) «Das armenische Hymnarium) Ներսէս վարդապետ Տէր Միքայէլեանի, տպված Լայպցիկում։ 2) Տիկին դը Փալօֆ—«Հայրենիքի համար» և «Տանապետ Անվախը» պատմուածք, Թարգմանութիւն Մ. Ղ.-ի, Նոր-Ջուղա, 27 միջակ երես, գինը 15 շահի կամ 15 կոպէկ։ 3) Դասագիրք կրօնի, առաջին տարի, կազմեց Սահակ քհ. Տէր Յովհաննէսեանց, տպված Թիֆլիսում, գինը 20 կ։ Այս դասագրքի վերջին կցած է կրօնական բառերի մի փոքրիկ բառարան հայերէնից ռուսերէն...

—

Անիի պեղումների ընդարձակման համար, պրոֆէսոր Մառին յանձնելու համար ստացանք 1) ինժեներ Ն. Տէր-Միքայէլեանից, ինժեներ Կ. Մակարեանից և ինժեներ Ա. Աթաբէկեանից 10-ական րուբլի, ուրեմն 30 ր., 2) Մնացական Խունունցից 25 ր.։ Ուրեմն նախկին ստացած 125 րուբլու հետ մենք ունենք 180 րուբլի։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կազմած յատուկ յանձնաժողովը համալսարանների վերաբերմամբ նոր կանոնադրութիւն կազմելու համար, վերջացրել է արդէն իր պարապմունքները։ Յանձնաժողովը, ինչպէս հաղորդում են «Н. О.»-ին Պետերբուրգից, եկել է այն եզրակացութեան, որ ռեկտորները, դեկանները և պրոֆեսորները պէտք է ընտրողական սկզբունքով նշանակվեն։

—

Բագուից գրում են «Кавказъ» լրագրին. «երեքշաբթի օրը, օգոստոսի 2-ին, երեկոյեան ժամը 9-ի մօտերը, Րեմեսլեննի փողոցում մի անյայտ անձի ձեռքով ծանր վիրաւորվեց երկաթուղային ժանդարմերիայի վախմիստր Զվօնօվը։ Սպանողը, ինչպէս երևում է, հայ է. նա փախաւ ազատվեց։»

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Առաջնորդի կարգադրութեամբ կոնսիստօրիայի թէ ատենադպիրը, թէ էկզեկուտօրը և թէ անդամ Մեսրոպ քահանան արձակված են պաշտօնից։ Յուլիսի 31-ին երեկոյեան Խանդամիրեանի դահլիճում Զարիֆեան ամուսինները սիրողների հետ խաղացին «Տրիլբի»։ Խաղը ընդհանրապէս բաւարար կարելի է համարել։ Սիրողների մեծամասնութիւնը դերերը լաւ չը գիտէր, որը և նպաստում էր անսամելի Թուլութեան»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Քաղաքին մօտիկ Ամանաշէն գիւղում սիրողները մատչելի գներով յուլիսի 31-ին խաղացին «Պէպօ»։ Խաղը անցաւ բաւական աջող։ Հասարակութիւնը գոհ էր»։

—

ԴԱՇՁԱԿԻՑ մեզ գրում են օգոստոսի 2-ին. «Յուլիսի 30-ին անգութ մահը խլեց մեր ուսանողական շրջանից մի մատաղ, երիտասարդ կեանք, ամենքին մօտիկ մի սիրալիր հոգի, լցուած հազար ու մի քաղցր յիշատակներով և փափագներով, որին դեռ նոր էր ժպտում կեանքը, խոստանալով նրան երկարամեայ տոկուն աշխատանքի փոխարէն, փայլուն ապագայ և գեղեցիկ ասպարէզ։ Վաղամեռիկ հանգուցեալ Ն. Զուլհակեանը բուն գանձակեցի էր. 80-ական Թուականներին, վերջացնելով Գանձակի քաղաքային ուսումնարանը, մտնում է Թիֆլիսի երկրաչափական միջնակարգ դպրոցը և այդտեղ էլ իբրև առաջին աշակերտ-մաթեմատիկ աւարտում։ Ապա Ն. Զուլհակեանին կանչում են զինւորական ծառայութեան, որտեղ 8 ամսվայ զինւորական պարապմունքից յետոյ քննութիւն է բռնում և ստանում օֆիցէրի աստիճան։ Բայց երիտասարդ Նիկօլայը, չունենալով հակում դէպի պետական ծառայութիւնը, հետևեալ տարին Գանձակի գիմնազիոնում տալիս է վերջնական քննութիւն և ստանում հասունութեան վկայական, որից յետոյ նա մտնում է Խարկովի տեխնօլօգիական ինստիտուտի մեքենագիտական բաժանմունքը։ Վաղամեռ Ն. Զուլհակեանցը երկրորդ դասընթացքի ուսանող էր և քաջ ծանօթ էր մաթեմաթիկային. նա ուսանողական շրջանում վերին աստիճանի բարոյական և գաղափարական մի օրինակելի տիպար էր։»

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Չը նայելով, որ մեր մամուլը մի քանի անգամ յիշեցրեց այն կենսական նշանակութիւն ունեցող դերի մասին, որը ունի կատարելու ընդհանրապէս գաւառական ինտելլիգենցիան, սակայն գաւառում. շնորհիւ բացակայող եռանդուն, ժողովրդասէր և գործունեայ երիտասարդութեան «ինքնավարութիւն, զեմստվօ» բառերը մնում են խաւար, տգէտ դասակարգի համար լոկ տերմիններ։ Ճիշտ է, նա՝ գաւառացին զգում է մի ինչ բուրմունք մօտակայ «գարնանային ծաղիկներից», բայց ինչումն է կայանում նրա ակտիվ, էական գործունէութիւնը, նա չէ կարող որոշել, որովհետև նա անծանօթ է ինքնավարութեան էական խնդիրներին, նրա խոշոր պատմական պրօբլէմաներին, որովհետև նա չը գիտէ տիրող օրէնսդրութիւնները և դրանց սահմանափակումները... Ուստի բնական է, կարծում ենք, որ մեծ պահանջ լինի թէ հանրամատչելի գրքոյկների և բրօշիւրների այս նիւթի վերաբերմամբ և առաւել ևս կենդանի, ազդու խօսքի։ Ցանկալի էր, որ կենտրօններից դէպի գաւառ՝ տգիտութեան և Թշուառութեան վայրը շտապէին գործին մօտիկ ծանօթ զարգացած ուժերը՝ ցոյց տալով հասունացած պահանջները և Կովկասի ինքնագիտակցութիւնը և անկախօրէն կառավարվելու կարելիութիւնը։ Գաւառը սպասում է անձկութեամբ, յուսալով որ իր խնդիրը չի մերժվի զարգացած, լուսամիտ հայրենակիցներից»։

—

ՑՂՆԱՅԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 25-ին Ցղնա գիւղից (Գողթան) 4 վերստ հարաւ Բէշան կոչված տեղում բերդան հրացաններով զինված 6 տեցի Թուրքեր յարձակվում են և գութանի տակից հանում 5 հայերի եզներ և նրանց արտից մի էշ։ Արտում գտնող մի հայի և Թուրքի ձեռները կապած տանում են մինչև Գիլան գետը, որից գողացած ապրանքը անցկացնելով բաց են թողնում կապվածներին և իրանք հեռանում։ Այդ աւազակութիւնը կատարվում է շրջակայ սարերում գտնված Թուրք բէգերի աչքերի առջև։ Կազակները 7 ժամ անց հետևում են աւազակներին և ձեռնունայն վերադառնում։ Հայ գիւղերում, որոնց մէջ հաստատված են կազակներ, ժողովուրդը զինաթափ է անվում։ Թուրքերը շարունակում են զինվել և օրէցօր յանդուգն են դառնում, տեսնելով որ Ջարդերին և Թալանին մասնակցող պարագլուխները մինչև այժմ անպատիժ են մնացել»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բրազիլիայի մայրաքաղաք Ռիօ-Դը-Ժանէյրօից հաղորդում են գերմանական Թերթերին, որ այնտեղի պարլամէնտը իր անդամներից մէկի առաջարկութեամբ նշանակել է տասը միլիօն ոսկու մրցանակ այն մարդկանց, որոնք կը գտնեն մի վերջնական ներգործիչ միջոց Թոքախտի կամ գորտնուկի բժշկութեան համար։ Բրազիլիայի կառավարութեան ներքին գործոց մինիստրը մի միջազգային մասնաժողով պէտք է կազմի, որի պարտականութիւնը պէտք է լինի քննել այն բոլոր ուսումնասիրութիւնները և առաջարկութիւնները, որոնք վերոյիշեալ հարցի մասին կը ներկայացնեն իրան։ Այդ մասնաժողովը բաղկացած կը լինի Ռիօ-Դը-Ժանէյրօի համալսարանի բժշկական ֆակուլտէտի երկու ուսուցչապետներից և Պարիզի, Լօնդօնի, Վիէննայի և Հռոմի համալսարանների բժշկական ֆակուլտէտների չորս բժիշկներից։ Մրցանակը գիւտ անողը կը ստանայ միմիայն այն ժամանակ, եթէ նրա գտած միջոցը երկու տարվայ ընթացքում աջող հետևանքներ ունենայ։

—Կ. Պօլսից հաղորդում են գերմանական «Berl. Tageblatt» Թերթին, որ սուլթան Աբդուլ Համիդ II-ը որոշել է այսուհետև սելամլիքին ներկայ լինելու համար սահմանափակ Թւով մարդկանց Թողնել։ Կառավարութիւնը այդ բանի մասին արդէն հաղորդել է Կ. Պօլսի օտարազգի դիպլօմատիական մարմիններին։ Սուլթանի նշանակած քննիչ յանձնաժողովը արդէն հաստատել է, որ սուլթանի կեանքի դէմ դաւադրութեան մասնակցող Րիպար, արդէն Զուիցերիա է հասել։ Բացի դրանից արդէն պարզվել է, ինչպէս Կ. Պօլսից հաղորդում են վերոյիշեալ Թերթին, որ բելգիացի Ժօրիսն էլ Վիդիր (?) անունով հայի հետ սերտ յարաբերութիւն է ունեցել։ Կ. Պօլսից գերմանական Թերթերին հաղորդված վերջին տեղեկութիւնները հաստատում են, որ դաւադրութեան մէջ զգալի կերպով մասնակցել են մակեդօնացիները և հայերը։

—Իտալիայի Վենետիկ քաղաքում բացվել է գեղարուեստական միջազգային ցուցահանդէսը, որ մինչև այժմ վաճառել է մօտ 600,000 ֆրանկի նկարներ։

—Բերլինի համալսարանի լիբերալ աստուածաբանութեան ուսուցչապետ Ադոլֆ Հարնակին (յայտնի հայասէր), որ ներկայումս համարվում է ամենաառաջին հեղինակութիւնը ընդհանուր եկեղեցական պատմութեան համար և ամենանշանաւոր բողոքական աստուածաբանը, գերմանական կայսրը հրաւիրել է իբրև Բերլինի արքունական գրադարանի գլխաւոր վերատեսուչ։ Գերմանական գիտնական աշխարհը կարծում է, որ դրանով գերմանական կառավարութիւնը ցանկանում է ոչնչացնել ուսուցչապետ Հարնակի ահագին ազդեցութիւնը բողոքական աստուածաբանութեան զարգացման վրա և բացի դրանից զրկել նրա ժողովրդականութեանը, որ նա վայելում է գերմանական ուսանողների շրջանում։

—Կ. Պօլսից հեռագրում են «Կորրէսպօնդէնց Բիւրօին». «Զմիւռնիայում բացված է հայկական մի մեծ դաւադրութիւն։ Հայերի տներում գտել են 80 հատ մեծ և 48 հատ փոքր ուժանակէ ռումբեր և Զմիւռնիայում զանազան հասարակական շէնքերի դէմ փորձ անելու յատակագիծը։ Ասում են, որ այդ յայտնագործութիւնը Ըլդըզի պալատում չափազանց մեծ յուզում է առաջացրել։ Անյապաղ հրաման է արձակված այստեղ և գաւառներում ամենախիստ քննութիւն կատարել։ Սպասվում են խմբական ձերբակալութիւններ»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

3 օգոստոսի

ԽԱՐԲԻՆ, 2 օգոստոսի։ Տարածված այն լուրը, որ ճապօնացիների ձեռնարկած յարձակումը փոխվում է մի ընդհանուր ճակատամարտի, չէ հաստատվում։ Յարձակումը ունէր միայն խուզարկողական նպատակներ։ Չէ կարելի կարծել, որ մինչև պատերազմի և խաղաղութեան հարցի վճռելը պատերազմական գործողութիւնների բեմում որ և է լուրջ ձեռնարկութիւն լինի։ Վերջին ժամանակը հիւսիսային Մանջուրիայում զօրեղանում է խունխուզների գործունէութիւնը։ Բօդէնէից դէպի հարաւ-արևմուտք հաստատվել է խունխուզների մի կուսակցութեան գոյութիւնը, որ գործում է ճապօնացիների առաջնորդութեամբ և որի Թիւը հասնում է 100—500 մարդկանց։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, 2 օգոստոսի։ Տօնավաճառային վաճառականութեան լիազօրների ժողովի նախաշրջանը սկսվեց։ Վաճառականների առաջին ժողովի բացման առթիւ գեներալ-նահանգապետի ճառի մէջ կոչ է անվում գործերը խաղաղ կերպով վարել և չընկնել ադմկայոյզ լուրերի ազդեցութեան ներքոյ, որովհետև արդէն ամեն տեսակի լուրջ միջոցներ են ձեռք առնված տօնավաճառում ծագելիք անկարգութիւնների առաջն առնելու։ Հնադանդների համագումարում մասնակցում են 135 ներկայացուցիչներ։ Համագումարը կը տևի երկու օր։ Ենթադրում են, որ նրանք կը գնան Գօրօդէց, սրբութիւնները տեսնելու։

ՊՈՐՏՍՄՈՒՏ, 2 օգոստոսի։ Այսօր խորհրդակցեցին չորրորդ յօդուածի մասին, որ վերաբերում է Լեաօդունեան Թերակղզուն։ Երկու կողմերն էլ համաձայնութեան եկան Թերակղզու ռուսական կօնցեսիան ճապօնիային յանձնելու մասին։ Այժմ ասում են, որ երրորդ յօդուածը վերաբերում էր ոչ Թէ մանջուրական երկաթուղուն, այլ Մանջուրիայում չինական կառավարութեան վերականգնմանը։ Արևելեան-չինական երկաթուղու մասին հարցը յետոյ քննութեան կենթարկվի։ Մշակվելիք տասն և երկու յօդուածները ներկայացնում են դաշնագրի միայն այն հիմնական կանօնները, որի բնագիրը յետոյ փոփոխութիւնների կենթարկվի։

ՊՈՐՏՍՄՈՒՏ, 2 օգոստոսի։ Պաշտօնական։ Ընդունվեց վեցերորդ յօդուածը։ Վաղը կը քննվի եօթներորդը։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 2 օգոստոսի։ «Դէյլի Խրօնիկլ»-ի տեղեկութեան համաձայն, Րուզվէլտը հաստատ համոզված է, որ Պորտսմուտի կօնֆերենցիայի հետևանքը կը լինի խաղաղութեան դաշնագրութեան կնքվիլը։

ԿԱՆԵԱ, 3 օգոստոսի։ Կանդիայում ընդհարում ծագեց ապստամբների և անգլիական զօրքերի մէջ, որոնք փորձեցին քաղաքն առնելու։ Մի հոգի վիրաւորված է։ Ռեսիմնօյի շրջանում սաստիկ ընդհարում ծագեց ռուսների և ապստամբների մէջ։ Վերջիններին առաջնորդում է Մանօսը։ Շատերը սպանված և վիրաւորված են։

ՄԱԴՐԻԴ, 2 օգոստոսի։ Լրագիրները մեղադրում են իշխանութիւններին Անդալուզիայում իրանց անգործունէութեան համար։ Ի նկատի ունենալով ապրուստի միջոցներից զուրկ 100,000 բանւորների յուսահատական դրութիւնը, հասարակական բարեգործութիւնը ամեն միջոցների է դիմել աղքատներին օգնելու համար և չը նայելով այդ սովին, ստիպում է բանւորներին իրանց ապրուստը հայթայթելու համար ամեն միջոցների դիմելու։ Սեվիլեական գաւառում շատ քաղաքներ ներկայումս գտնվում են մի ինչ որ «Ժակերիայի» իշխանութեան տակ, որ տերրօրի է ենթարկում ազգաբնակութեանը։ Հողատէրերից շատերը ստիպված էին փախչելով ազատվել նըրանցից։

4 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 օգոստոսի։ Գեներալ Լինէվի ամենահպատակ հեռագիրները օգոստոսի 1-ից. 1) Յուլիսի 31-ին ճապօնացիների ականատեսերը ռմբակոծեցին Լազարեվսկի դիրքը, նրանց ջանքերը՝ ափ հանելու զօրք—յետ են մղվում կրակով։ Կորէայից եկած տեղեկութիւնների համաձայն, յուլիսի 23-ին ճապօնացիների մի զօրաբանակ շարժվեց Կոպունգանից մեր զօրախմբի վրա Շաքօրի գիւղի մօտ, բայց յետ մղվեց հրացանային կրակով։ Յուլիսի 24 և 25-ին հակառակորդի արշաւումը կրկնվեց։ Միաժամանակ տեղի էր ունենում հակառակորդի արշաւումը մեր միւս զօրախմբի վրա, որը յետ մղվեց հրացանային կրակով այնքան աջող, որ ճապօնացիները փախան՝ Թողնելով սպանվածներ և ռազմամթերքը։ Յուլիսի 28-ին մեր զօրախումբը Օնգի գիւղի մօտ հրացանաձգութիւն ունեցաւ հակառակորդի հետ. ապա սկսեց արշաւել և յետ մղեց նրան դէպի հարաւ, ճապօնական դիրքերը։ Գտնված են հրացաններ և ռազմամթերք։—2) «Կորէայից զեկուցում են, որ մենք գրաւել ենք Կոպունգանի գիւղը։ Հրաձգութիւնը Լազարեվի աւանի մօտ վերջացաւ յուլիսի 31-ին և ճապօնական ականատեսերը հեռացան»։

ՊԱՐԻԶ, 3 օգոստոսի։ Նիւ-Եօրկից եկած մասնաւոր տեղեկութիւնների համաձայն, արևելեան չինական երկաթուղու նոր կազմակերպութեան ժամանակ՝ ճապօնական և չինական լիազօրների հետ միասին պէտք է մասնակցեն նոյնպէս ռուսական և ամերիկական ներկայացուցիչները, որովհետև ի նկատի կայ գրաւել այդ ձեռնարկութեան համար ռուս և ամերիկացի կապիտալիստներին, երկաթուղու գրաւականով։—Որովհետև Մանդուրեանի վերաբերմամբ բաց դռների քաղաքականութեան հետևմամբ սպասվում է, որ անմիջապէս կը կազմվի մի միջազգային ընկերութիւն մանջուրական հարուստ աղբիւրները շահագործելու համար, ուստի կողմնակի առաջարկութիւններ են եղել՝ Կորէայում ականաւոր ռուսներին պատկանող կալուածների գնման համար։

ՎԻԷՆՆԱ, 3 օգոստոսի։ Կայսր Ֆրանց Ժօզէֆը գնաց Գմունդէն, որ այնտեղ հանդիպէ անգլիական Թագաւոր Էդուարդին։ Իշլ հասնելիս երկու վեհապետները ընդունեցին ողջոյնի ադմկալից բացականչութիւններով։

ՊՈՐՏՍՄՈՒՏ, 2 օգոստոսի։ Լիազօրները ընդունեցին այսօր 4-դ յօդուածը, որ վերաբերում է Ռուսաստանի հրաժարման Պօրտ-Արտուրի և Լեաօդունեան Թերակղզու վրա ունեցած վարձակալական իրաւունքից։ Լիազօրները չը կարողացան համաձայնութեան գալ

Սախալինի գիջման հարցի մասին, որ կազմում է 5-դ յօդուածի առարկան։ Նրա քննութիւնը յետաձգված է մինչև կոնֆէնցիայի վերջը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 2 օգոստոսի։ Վաշինգտոնի կառավարութիւնը հաշտութեան կնքումը համարում է անկասկած։ Միացեալ-Նահանգները գտնվում են, որ Եապոնիան իրաւունք ունի պահանջել պատերազմական ծախսերի հատուցումը և Սախալինի գիջումը։

ԵԱՊՕՆԱԿԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԲԱՆԱԿԱՏԵՂԻՆ ՄԱՆՋՈՒՐԻԱՅՈՒՄ, 31 յուլիսի։ Եապօնացիները ելէկ սաստիկ խուզարկութիւն կատարեցին երկաթուղային գծի վրա և Զանդաֆունից մինչև Գերին ճանապարհի վրա։ Նրանք յետ մղեցին ռուսների առաջաւոր կայանները, որոնք կորցրին 11 մարդ սպանված և 10 գերի։ Ռուսական զօրքերը, որոնք նոյնպէս խուզարկութիւն էին կատարում Կինկտուցի շրջանում, յետ մղվեցին եապօնական առաջապահ կայաններից։

ՏՕԿԻՕ, 2 օգոստոսի։ Ծովապետ Կատաօգան զեկուցանում է, որ եապօնական էսկադրայի մի մասը յուլիսի 31-ին յարձակվեց ռուսների վրա, որոնք պաշտպանում էին Լազարեվի հրուանդանը Թաթարական նեղուցներում։ Եապօնացիները ափ իջեցրին զօրք որ յանկարծ յարձակում կրեց ռուսներից և կորցրեց 1 սպանված ու չորս վիրաւոր, բայց նա, յետոյ, ցրվեց ռուսներին, բռնեց կայանը և կտրեց հաղորդակցութիւնը, եապօնական մի հակառականաւի կոմանդան, որ գործում էր Սախալինի արևելեան ափում յուլիսի 31-ին յարձակվեց հեռագրական կայարանում գտնվող ռուսների վրա։ Եապօնացիները գերի վերցրին 18 մարդ, գրաւեցին հեռագրական գործիքը և զէնք։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ենթադրվում է փակել բոլորովին լեռնային ինստիտուտը, լեռնային գործի ուսումը փոխադրելով պօլիտեխնիկական ինստիտուտները։

ԼՕՆԴՕՆ, 3 օգոստոսի։ Իրանց ազատ Ռուսաստանի բարեկամ համարող անձինք տպել են լրագիրներում կոչ՝ հանգանակութիւն բանալ ի նպաստ այն տաժանակիր դատապարտվածների, որոնց ազատել են եապօնացիները Սախալինում։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 3 օգոստոսի։ Ամերիկական լրագիրներից մէկը հաղորդում է, որ Սախալինի գիջման վերաբերեալ յօդուածի քննութեան յետաձգման առաջարկութիւնը արել են եապօնացիները։

Կ. ՊՕԼԻՍ, 3 օգոստոսի։ Անգլիական դեսպանը զօրեղ բողոք ներկայացրեց այն բռնութիւնների առիթով, որ Դիարբեքիրում Համիդէի զօրքը գործել է հայերի դէմ Ելդըզի սպանութեան փորձի ժամանակ։ Սուլթանական գվարդիայի բոլոր ալբանացիները և արաբները զարհուրած պայթումից փախան և միայն թիւրքական գվարդիան, որ բաղկացած կարաչելի ցեղի զինուորներից, մնաց տեղում և մերկացրեց սրերը սուլթանի պաշտպանութեան համար։ Այդ պատճառով սուլթանը հրատարակեց իրադէ, որ Բէշիքթաշում, Օրտակէօում և պալատի շրջականերում պահակութիւն անող բոլոր ժանդարմները ընտրվեն բացառապէս յիշեալ ցեղի զուտ արիւն թիւրքերի միջից։

ԼՕՆԴՕՆ, 3 օգոստոսի։ Սպասում են, որ Պօրտսմուտի բանակցութիւնների ընթացքը աւելի քիչ արագ կը լինի, որովհետև բոլոր մնացած յօդուածները աւելի կամ քիչ աստիճանով կը յետաձգվեն Վիտտէի կողմից, որ քննում է այսօր 7-րդ յօդուածը չինական-արևելեան երկաթուղին Զինաստանին գիջելու մասին։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ 3 օգոստոսի։ Պետական դեպարտամենտը ստացել է Պօրտսմուտից եապօնական պատուիրակներից մագաղաթի պատուէր, որ գործ է ածվում դաշնագրերի համար. այդ պատուէրը համարում են լաւ նշան, որ կոնֆերէնցիան աջող կը վերջանայ։

ՄԱԴՐԻԴ, 4 օգոստոսի, «Լիբերալ» լրագիրը հաղորդում է, որ Ֆրանսիան և Գերմանիան համաձայնել են սպանիական առաջարկութեան՝ գումարել Մադրիդում Մարօկկեան կոնֆերէնցիան։

ԲԵԼԳՐԱԴ, 3 օգոստոսի։ Ականաւոր մակեդոնացիները, սերբերը, բօլգարները և ալբանացիները մտադիր են կազմել Պրիլէպի շրջականերում ժողով այն նպատակով, որ ուրուագծին իրանց ապագայ գործունէութիւնը և որոշում կայացնեն սուլթանին տապալելու համար։

ՓԱՐԻԶ «Թայն» լրագիրը զգուշութեամբ շօշափում է այն հարցը, թէ ինչ դիրք կարող են բռնել Հեռաւոր-Արևելքում շահագրգռված պետութիւնները՝ Պօրտսմուտի բանակցութիւնների վերաբերմամբ, մինչև կոնֆէրէնցիայի վերջնական վճիռը, որչափ յօդուածները վերաբերում են ոչ բացառապէս ռուս-եապօնական ազդեցութեան շրջանին։

ՊԷԿԻՆ, 3 օգոստոսի։ Չինական կայսրուհու դէմ սպանութեան փորձ եղաւ այն միջոցին, երբ նա Պէկինից գնում էր ամառային պալատը։ Չինուորը սուինով սպանեց յանցաւորին։ Կայսրուհին վիրաւորված չէ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշւով. իսկ Թիֆլիսինը 58 րօպէ կամ մի ժամ աւելի ուշ պէտք է հաշւել)։

	Պոստ.	Մարդ.	Արագ.	Ապր.
Բագուից դուրս գալը	4.33	12.38	1.18	5.10
Թիֆլիս հասնելը	10.43 առ.	5.51	2.22	11.10
Թիֆլիսից դուրս գալը	11.28	6.39	10...	6.58
(Թիֆլիսի ժամանակով)	12.26	7.37	10.58	7.48
Բաթում հասնելը	12.31	7. 8	8.16	12.42
Բաթումից դուրս գալը	5.55	10. 9	9.33	
Թիֆլիս հասնելը	6.29	10.33	7.39	
Թիֆլիսից դուրս գալը	7.29	11.13	4.59	
(Թիֆլիսի ժամանակով)	8.27	12.11	5.57	
Բագու հասնելը	1.—	4.59	5.46	
Երևանից դուրս գալը	12.25			9.40
Կարսից » »	4.12			1.17
Ալէքսանդրօպօլ »	7.50			5.26
Թիֆլիս հասնելը »	5.24 առ.			3.28
Թիֆլիսից դուրս գալը	11.50 գիշ.			2.50
(Թիֆլիսի ժամանակով	42.48 գիշ.			3.48 ց.
Ալէքսանդրօպ. » »	10.50			2.44
Կարս հասնելը	2.20			6. առ.
Թիֆլիս »	4.48			8.52

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. Շերմազանեանց

Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6,

Երևանեան հրապարակ, տուն Արղութեան, բնակարան Լալայեանցի բնակարան։

Գուտտենբերգ

Գրախանութում վաճառվում են

Յովհ. Աւրաքաչեանի աշխատութիւնները.

Մայրենի լեզու Ա. տարի . . 25 կօպ.
» » Բ. » . . 30 »
» » Գ. » . . 40 »

Տարրական քերականութիւն հայոց աշխարհաբար լեզուի 25 կ.

Տպագրվում է և շուտով լոյս կը տեսնէ Ի. Վազօվի «ԼԾԻ ՏԱԿ» յայտնի վէպը (երկու մասը միասին), թարգմ. Յովհ. Աւրաքչեանի։ Գինը 1 ր. 25 կօպէկ։ Պահեստը լինելու է «Գուտտենբերգ» գրավաճառանոցում։ 5—10

Աստրախանում յայտնի խմբապետ

ՆԻԿ. ՄԵԴՆԻԿԵԱՆՑ

Հոչակաւոր թէ եկեղեցական խմբեր, և թէ հայոց, և ռուսաց համերգներ կազմելով, տասն և երկու տարի գործելով Աստրախանում և աջողութեամբ վարելով խմբապետի պաշտօնը, այժմ տեղական մի քանի անբաւարար պայմաններից դրդված ցանկանում է մի ուրիշ հայաբնակ քաղաքում ստանձնել մի և նոյն պաշտօնը, յուսալով աւելի գործելու լայն ասպարէզ գտնել։ Դիմել՝ Астрахань, Арм. Агабабовское училище, учителю пѣнія Н. Мѣдникову կամ Арм. Петро-Павловская церковь хормейстеру Н. Мѣдникову. 3—5

Զգուշացէք կեղծումներից

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ

Դեղագործ

Ի. Ֆ. ԻՒՐԳԷՆՍԻ

Ոչնչացնում է պզուկները, այրվածքները, դեղին բծերը, ուռոյցքները և ազդում է աւելորդ քրտնաբերութեան վրա. ոչնչացնում է վատ հոտը։ Ցանձնարարվում է իբր տուալէտի անուշահոտ սապօն բարձրագոյն տեսակի։

Ոսկէ մեդալ Լօնդօնում 1893 թ.

Կտորի գինը 50 կ., 1/2 կտորը 30 կ.։ Ծախվում է բոլոր ամենալաւ դեղատներում, դեղապահեստներում և անուշահոտութիւնների խանութներում։

Բոլոր Ռուսաստանի համար գլխաւոր պահեստը Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մօսկվայում։ (4, 19) 20—24

Այս յայտարարութիւնը տպված է „Правительств. Вѣстникъ“-ի № 43/1903 թ.

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԷՏԻՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ տեղեկացնում է Ընկերութեան վարձատէրերին, որ պ. պ. Լիազօրների 1905 թւի ապրիլի 19 ին հերթական ժողովում հաստատված է Վերահսկող Կոմիտէտի և Վարչութեան Միացեալ Ժողովի զեկուցումը, որով հետևեալ որոշումն է արված Ա. Տէոդորովիչ Կորգանովի անուան ստիպենդիա հիմնելու առիթով վարձատէրերի որդիների համար.

1) Հիմնել ստիպենդիա Ան. Ս. Կորգանովի անունով
2) Այս նպատակով տարեկան ծախք նշանակել 400 ր։
3) Ստիպենդիա տալ աւելի շուտ ամենաաղքատ փոխառուների որդիներին, որոնք սովորում են Թիֆլիսի միջնակարգ արական կամ իգական դպրոցներում։
4) Ստիպենդեանտի ընտրութիւնը կատարվում է վերահսկիչ կոմիտէտի և վարչութեան միացեալ նիստին, և
5) Մի մարդու տալ բոլոր գումարը, թէ բաժանել մի քանիսին, կրկին թողնվում է մի և նոյն Միացեալ Նիստին։

Ստիպենդիա ստանալ ցանկացող անձերը թող բարեհաճեն գրաւոր յայտարարութեամբ դիմել Թիֆլիսի քաղաքային կենտր. ընկ. վարչութեանը մինչև 1905 թւի սեպտեմբերի 1-ը։
(ու. կ.) 1—2

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Թիֆլիսում վաճառվում են հետևեալ գրքերը.

Ահարոնեան Ա. Ժողովածու երկերի, հատոր ա.
Ս. Պ. գ. 1 ր. ճ.ծ. 25 կ.
» Մրրկի սուրբը, Թիֆ. 1 ր. ճ.ծ. 25 կ.
» Իտալիայում, Թիֆ. 1 ր, 50 կ., ճ.ծ. 25 կ.
» Արաղ, Թիֆ. 80 կ. ճ.ծ. 20 կ.
» Լռութիւն, Թիֆ. 60 կ. ճ.ծ. 15 կ.
Լէօ. Ս. Մեսրոպ, Թիֆ. 75 կ. ճ.ծ. 15 կ.
» Գրիգոր Արծրունի, 3 հատ. 4 ր. ճ.ծ. 60 կ.
» Մէլիքի աղջիկը, Թիֆ. 1 ր. 50 կ. ճ.ծ 30 կ.
(ո.) 1—3

Լոյս տեսաւ

ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ

I տարի

Աշակերտների յարմարութեան համար

ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԱԳՐՔՈՎ

Դիմել՝ Ставрополь (Кавказскій) священику Сааку Теръ Ованнисянцъ. (ո.կ.ե.հ.) 1—4

ԵՂ. Մ. և Ա. ԹԱՌԱՅԵԱՆՑՆԵՐԻ

գրավաճառանոցներում

1) Тифлисъ, Голов. просп. 2) Баку, пр. Парапета.

Ընդունվում են կօմիսիայով վաճառելու համար ամեն տեսակ գրքեր։ 4—10

ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ԿՐՕՆԻ

ՀԵՏԵՒԵԱԼ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

(Թոյլատրած հոգևոր իշխանութիւնից)

I ուսուցչաց համար.

1. Ուղեցոյց Հին-ուխտի , . .	15—7
2. Ուղեցոյց Նոր-ուխտի . . .	2— 5
3. Ուսուցումն քրիստ. կրօնի Դ. հատոր	1— 50
4. Ուսուցումն քրիստ. կրօնի Ե. հատոր	— 50
5. Մի քանի խօսք հայ կրօնուսոյցներին	— 10

II աշակերտաց համար

6. Դասատետր կրօնի Ա. տարի (11 տիպ)—	25
7. Դասատետր կրօնի Բ. տարի (10 տիպ)—	20
8. Դասատետր կրօնի Գ. տարի (8 տիպ)—	30
9, Սրբազան պատմ. Հին ուխտի (6 տիպ)—	33
10. Սրբազան պատ. Նոր. ուխտի (5 տիպ)—	40
11. Գործք առաքելոց . . . —	40

Կարելի է դիմել.

1. Ինձ—Тифлисъ, Коммерческое училище.
2. » Книжн. магаз. Гуттенбергъ.
3. » Центральная книжн. торг.

Ինձ դիմողներն ստանում են. 1) Ուսուցչաց դասագրքերի համար 35%, 2) իսկ աշակերտաց՝ 20% զեղչ (Ա. տարին 25%) Աղքատ դպրոցներին ձրի։ Սահակ քհ. Սահակեանց
(չ. ո. կ.) 2—15

Սուրբ-Խաչ քաղաքի ս. Ամենափրկիչ

եկեղեցու համար հարկաւոր է մի ճեմարանաւարտ կամ Ներսիսեան դպրոցը աւարտած քահանայացու, որը, եթէ իր վրա առնէ տեղական սկզբնական դպրոցներում հայ. կրօնուսոյցի պաշտօնը՝ տարեկան հազար րուբլուց աւելի եկամուտ կունենայ։

Նոյն քաղաքի սկզբնական-նախարարական դպրոցների համար հարկաւոր են երկու ցենզաւոր ուսուցիչներ հայոց լեզուից, որոնք նմանապէս պէտք է աւարտած լինեն ճեմարանի, կամ Ներսիսեան դպրոցի դասընթացը. նրանցից իւրաքանչիւրը՝ ունենալով շաբաթական 15 դաս, կը ստանայ տարեկան ռոճիկ 600 րուբլի։ Ցանկացողները իրանց արտօնաթղթերը պէտք է ուղարկեն՝ քահանայացուն— Աստրախանի բարձ. սրբազան առաջնորդին, իսկ ուսուցիչները—Директору народныхъ училищъ Ставропольской губер., մի և նոյն ժամանակ և՛ մեզ իրանց ցանկութիւնը յայտնելով հետևեալ հասցէով. Въ городъ Св.-Креста, Семену Павловичу Сафаріанцу. 3—3

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Լազարեան Ճեմարանի արեւելեան լեզուաց, Մօսկուա.

Պետ. խորհրդ. Դանիել Գաբրիէլեան Քանանեանի մրցանակի Բարձրագոյն հաստատուած կանոնադրութեան 7-րորդ յօդուածի հիման Լազարեան Ճեմարանի մասնագիտական Դասարանների Խորհուրդը իր՝ 1905 թ. Ապրիլի 5-ին կայացած նիստում վճռեց յայտարարել իր գիտութիւն մասնագէտների առաջիկայ երկու նիւթը՝ երկու մրցանակի համար, իւրաքանչիւրը՝ 1000 րուբլի։

Ա.—Հայ գաղթականութեան պատմութիւնը հանդերձ իւրաքանչիւր գաղութի պատմական տեսութեամբ՝ սկսած Հայ Արշակունիների անկումից մինչև մեր օրերը։

Բ.—Հայերի և Վրացիների քաղաքական և կուլտուրական փոխադարձ յարաբերութիւնները՝ հին ժամանակներից սկսած մինչև Վրաստանի միանալը Ռուսաստանի հետ։

——

Հետազօտութիւնները կարող են ներկայացուել Հայերէն կամ Ռուսերէն, Ֆրանսերէն կամ Գերմաներէն։

Լաւագոյն հետազօտութիւնը յիշեալ իւրաքանչիւր նիւթի մասին կը պարգևատրուի Խորհրդի կողմից հազար (1000) րուբլի մրցանակով։

Եթէ առաջին կամ երկրորդ նիւթի մասին ներկայացրած հետազօտութիւններից երկուսը հաւասար արժողութիւն ունենան, Խորհուրդը կարող է բաժանել մրցանակը երկուսի հեղինակների մէջ։

Հետազօտութիւնները պէտք է ներկայացուին ոչ ուշ քան 1-ն Սեպտեմբերի 1907 թ.։

Վերատեսուչ Ճեմարանի Վս. Միլլեր
Քարտուղար Խորհրդի Ա. Խախանով

1—3

Բ Ա Ց Վ Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա Ն Ի

Շքեղ պատկերազարդ հրատարակութեան

հեղինակութիւն ԼԷՕԻ

Բովանդակութիւն. Ուղևորի տպաւորութիւններ.—Անիի և շրջակաների տեղագրութիւն.—Բագրատունիների թագաւորութեան սկիզբը և անկումը, ընդարձակ տեսութիւն.—Անիի անցեալը։

Ստուար հատոր, զարդարված 100-ից աւել պատկերներով և բազմաթիւ զարդանկարներով ու օրնամենտներով, որոնք ընդօրինակված են Անիի քանդակներից։ Առանձին՝ Մայր Եկեղեցին, մեծադիր, գունաւոր պատկեր, գործ ճարտարապետ պ. Թորամանեանի։

Գ ի ր ք ը կ ը տ պ ա գ ր վ ի ա ր տ ա ս ա հ մ ա ն ու մ։

Բաժանորդագինն է 5 րուբլի։

Կարելի է վճարել և մաս-մաս.—գրվելիս 2 րուբլի, իսկ մնացած 3 րուբլին մինչև գրքի լոյս տեսնելը։

Գրվել կարելի է Թիֆլիսում, 1) «Մշակի» խմբագրատանը (Редакція «Мшакъ»), 2) «Գուտտենբերգ» գրավաճառանոցում։ (Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ“.)

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Լերմոնտովեան փողոց, № 15)

Ցանկացողները ունենան իրանց առեւտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առեւտրական կրթութիւն, [illegible]

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Կուրսերի ծրագիրը և կանոնները [illegible] դիմում են՝ ТИФЛИСЪ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу.
(ո) 9—12